ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«10» հոկտեմբեր 2017 թվականի № 86-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ <ՀԱՅԱՏՈՄ> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 143-Ն հրամանի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2012 թվականի օգոստոսի 2-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգի և ներքին աուդիտի ռիսկերի որոշման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 61-Ա և Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2017 թվականի մինչև 2019 թվականի ռազմավարական և 2017 թվականի տարեկան ծրագրերը հաստատելու մասին» թիվ 133-Ա հրամանները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Կարեն Թորոսյանին և բաժնի առաջատար մասնագետ Լուսինե Արզումանյանին՝

1) 2017 թվականի հուլիսի 13-ից սկսած՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ենթակայության տակ գտնվող <Հայատոմ> ՓԲԸ-ի 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական և 2015 թվականի ապրիլի 1-ից մինչև 2017 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածի գնումների համապատասխանության աուդիտ.

2) աշխատանքներն ավարտելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում աուդիտի արդյունքների մասին ներկայացնել հաշվետվություն Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ